

ԵԹԻԳԵՆԻԱՆ ՏՈՒԾԵՍՈՒՄ

ՀԻՆԳԵՐԱՐԴ ԳՈՐԾԱՂՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Թուաս եւ Արքաս

Արքաս. Յուղուած, շփոթուած, ինքս էլ չգիտեմ

Թէ կասկածանքներո ժը պէտք է ուղղել:

Գերիքն են արդեօք, որ ծածուկ կերպով և իրանց փախստեան ելք են որոնում.

Եւ միթէ նոցա այդ ծածուկ մտքին

Սատար է լինում ինքը Քրմուհին:

Լուր է տարածւում, թէ գերիներին

Այս ափը ձգող նաւը խնամքով

Խորշերից մէկում պահուած է դաղտնի:

Նոյնիսկ այդ մարդու խելացնորութիւնն

Ու այդ նուիրումն ու յապաղումի

Պատրուակն այդ սուրբ այդ ամենն իմ մէջ

Խիստ կասկածների, մտատանջութեան

Տեղիք են տալիս:

Թուաս. Քրմուհուն շռտով այստեղ կոչեցէք.

Ապա գնացէք, արագ, սուր կերպով

Հետազօտեցէք ափն ամբողջապէս

Սարալանջերից մինչև դիցուհու

Անտառակը սուրբ: Չմտնէք միայն

Խորքերը նորա: Դաղտ դարան մտէք

Լուռ սպասեցէք նոցա երեման.

Եւ հէնց որ յայտնուին, բռնեցէք իսկոյն:

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Թոաս. Կրծքիս մէջ զայրոյթն ուժգին հոսանքով
եռում է, զիզւում նախ քրմուհու դէմ,
Որին ես այդքան սուրբ էի կարծում,
Ապա անձիս դէմ, որ իմ բարութեամբ
Ու ներող սրտով վարժեցրի նրան
Նենգ ստոր կերպով ինձ դաւ նիւթելու:
Երբ մարդուն զրկեն ազատութիւնից,
Հեշտիւ կը վարժուի նա ստրկութեան
Եւ նոյն հեշտութեամբ կը հնազանդուի
Օտար ուժերի: Այս, թէ որ նա
Իմ դաժան նախնեաց օրերին ապրէր
Եւ սուրբ զայրոյթից մի կերպ ազատուէր,
Նա ուրախ կը լինէր մենակ փրկւելուն,
Եւ ուրախութեամբ շնորհակալ կը լինէր
Իւր բախտի համար, սեղանի առաջ
Թափելով արիւնն օտար եկուորի՝
Անհրաժեշտութիւնը պարտք կը համարէր:
Իմ բարութիւնն այդ նրա կրծքի մէջ
Յանդուգն խիզախ միտք է ծնեցնում:
Իզուր յուսացի գրաւել նրան.
Նա իւր սեփական վիճակն է խորհում:
Մեղմ փաղաքշանքով տիրեց իմ սրտին.
Իսկ հիմա՝ երբ դրան ես դէմ եմ կենում,
Ստով, նենգութեամբ ցանկանում է նա
Ճանապարհ հարթել իւր նպատակին
Եւ իմ բարութիւնս ընդունում է լոկ
Իւր հին բազմաժեայ սեփականութիւն:

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Իմբիգենիա, Թոաս.

Իֆիզենիա. Կոչում էիր ինձ: Եւ ինչու անձամբ

Եկել ես այս կողմ։ Խ ջնարակաց չ բայ առաջ
Թուաս. Ինչու ես այզքան զոհն յետաձգում։ Խ և
Իֆիզենիա. Արքասին արդէն ասել եմ ես պարզ։
Թուաս. Սակայն քեզանից կուզէի յսել
Իֆիզենիա. Դիցուհին քեզի ժամանակ կըտայ

Խորհրդակցելու։ Խ ջնարակաց այս առաջարկ
Շուաս. Իսկ իմ կարծիքով այս առաջարկ չ է
Քեզ է հարկաւոր այդպիսի միջոց։

Իֆիզենիա. Թէ ամբողջովին դաժան որոշմամբ
Բռնուած է ողիզ, չպիտի գայիր։

Զի մի թաղաւոր, որ տենչում է միշտ

Անսիրտ, անգութ բան, բաւական թուով

Ծառայ կունենայ, որոնք շնորհի

Կամ վարձի համար գործի կէս անէծքն

Իրանց վրայ կառնեն խիստ ազահ կերպով,

Բայց ինքն իր անձով անբիծ կը մնայ։

Ծանր թուխապերում նա մահ է նիւթում,

Եւ նրա ծառայք ներքե են բերում

Բոցալի կորուստն խղճուկի գլխին։

Իսկ նա բարձրունքում ամպրոպի միջով

Զերթ անմատչելի աստուած երկնային

Սաւառնում է լուռ, խաղաղ, հանդարտիկ։

Թուաս. Առլր շրթունքներիցդ հինաւուրց վայրի բայ

Մի երգ է հնչում։

Իֆիզենիա. Ես քրմուհի չեմ.

Ազամեմնոնի դստրիկն եմ։ Լաւ տես։

Դու յարգում էիր խօսքն անձանօթիս,

Եւ միթէ հիմա հրամայել կուզես

Ինձ, իշխանուհու։ Մանուկ օրերից

Սովորել եմ ես հպատակուել նախ

Իմ ծնողներիս, ապա զիցուհուն

Եւ միշտ էլ հոգիս զեղեցկին ուղղուած։

Միայն ոչ այնտեղ և ոչ էլ այստեղ

Դաժան խօսքերի, բիրտ պատուէրների

Չեմ եղել հոգով հպատակ անխօս։

Թոսս. Այդ է հրամայում ոչ թէ քեզ արքան լիք
 Այլ մի հինաւուրց օրէնք սրբազան: Հայմ ապօն
 իֆիզենիա. Սրտով կընդունենք մենք այն օրէնքներն,
 Որոնք կըքի գէմ զէնք են ծառայում.
 Ինձ մի այլ օրէնք, գեռ աւելի հին,
 Հրաման է տալիս գէմ կենալ կամքիդ.
 Մի օրէնք, որով ամեն մի օտար այ քամ ապօն
 Հիւր է սրբազան:
 Թոսս. Թւում է նրանք այս մասնաւունքներն ավմբուժութեան
 Շատ մօտ են սրտիդ, զի կարեկցութիւնն
 Ու հոգուդ յուզում մոռացնել տուին այ զի
 Քեզ խոհեմութեան պատուերն առաջին
 Թէ զօրաւորին պէտք չէ զայրացնել:
 Իփիզենիա. Ինչ որ իմ մէջ կայ ու միշտ կրմայ,
 Կիմանաս միշտ գու, թէկուզ ես խօսեմ,
 Կամ թէ լուռ մնամ: Միթէ ուրիշի մասի ըլա՞
 Նոյնանման վիճակն մի փակուած սրտում
 Զի գտնի իրան կարեկցող ընկեր: առաջ ազմ ամ
 Եւ իմ նկատմամբ որքան առաւել,
 Զի ես նոցա մէջ ինքս ինձ եմ տեսում: ամ քայ
 Սեղանի առաջ ես էլ դողացի.
 Երբ հանգիսարար ինձ՝ ծունք դրածիս:
 Վաղահաս վախճանն պատել էր ուժգին:
 Փայլում էր արդէն սուրը մահարեր
 Կեանքով լի կրծքիս վախճան դնելու:
 Սարսափից բռնուած եռում էր կարծես
 Իմ ոիրտս ու հոգիս, աչքս փակուեցաւ
 Եւ... յանկարծ ես ինձ ազատուած գտայ:
 Ինչ որ աստուածներն ազորմածաբար
 Շնորհում են մեզ, պարտաւոր չե՞նք մենք
 Խեղճ թշուառներին նոյնը կըկնելու:
 Դու այդ լաւ գիտես, ճանաչում ես ինձ,
 Ուզում ես միայն բռնի ստիպել:
 Թոսս. Հետեւիր պարտքիդ, ոչ թէ արքային:
 Իփիզենիա. Թուղ, մի զարդարիր գու քո բռնութիւն,

Որ ուրախ է մի թոյլ կնոջ առաջ ամսաման միջնամ
ես այդ մարդու պէս ազատ եմ ծնուած։ Հայ
թէ քո դէմ գուրս գար Ազամեմնոնի ազագ
Որդին ու կրկին զու ցանկանայիր միջնամ
Անվայել բաներ, իւր զօրեղ բազկով
Սայրասուր սրով նա քեզ ցոյց կըտար—
Որ իւր սիրտ-հողու սուրբ իրաւունքներն
Գիտէ պաշտպանել։ Ես ոչինչ չունեմ
Բացի խօսքերից իսկ աղնիւ մարդուն
Վայել է կնոջ խօսքը միշտ յարգել։
Թուաս. Յարգում եմ նոյնիսկ աւելի, քան թէ
Մի եղբօր սուսեր։

ԻՖԻԳԵՆԻԱ. Շուտ շուտ է փոխւում բախտը զէնքերի։

Եւ ոչ մի խոհեմ, խելացի մարտիկ
Հակառակորդին ցած չի դնահատում։
Բնութիւնն էլ նոյնիսկ ուժի, զօրութեան
Խստութեան հանգեպ թոյլին չէ թողել
Առանց օգնութեան. խորամանկութեան
Արուեստ է տուել մերժ տեղի տալու,
Մերթ յապաղելու հնար ընձեռնել։
Այս, արժէ որ բոլոր այդ հնարներն
Ի կատար ածուին հզօրիդ առաջ։

Թուաս. Բայց զգուշութիւնն խելացի կերպով
Էնդդէմ է կենում խորամանկութեան։

ԻՖԻԳԵՆԻԱ. Բայց տղին հոգին դա դործ չի ածի։
Թուաս. Սեփական բերնով մի արտասանիր
Անձիդ գատակնիք։

ԻՖԻԳԵՆԻԱ. Ո՞չ, թէ տեսնէիր, ինչպէս է ջանում
Քաջարի կերպով հօգիս դէն վանել
Դժնդակ այս բախտն, որ ուժգինապէս
Ուզում է տիրել սրտիս և հոգուս։
Այդպէս, քո առաջ անզէն եմ իսպառ.
Մերժում ես ուրեմն խնդիրս իմ սիրուն,
Կին մարդու ձեռքին սրից ու զէնքից
Զօրաւորագոյն այդ փունջը վայելուչ։

Ներքին աշխարհիս պաշտպան կանգնելու
ինչ է մնում ինձ։ Արդեօք զիցուհուց
Հրաշք աղերսել։ միթէ իմ հոգու
իորին ծաքերում չկայ ոչ մի ոյժ։
Թուաս. ինչպէս կերեի, ցաւում ես անչափ
Այդ եկտորների վիճակի համար։
Ի՞նչ մարդ են նոքա, ասա ինձ ազատ,
Որոնց դու այդպէս պաշտպան ես կանգնում։
Իֆիզենիա. Նոքա…կարծես թէ ինձ… յոյն թուացին։
Թուաս. Ուրեմն և անշուշտ քեզ հայրենակից։
Քո վերադարձի պատկերը չքնաղ
Նոքա նոր թափով յարուցած կըլինեն
կարօտ սրտիդ մէջ։

Իֆիզենիա. (Մի ֆոքը լոռվթիւնից յետոյ)։

Միթէ մեծ գործի տղամարդը լոկ
Ունի իրաւունք. միթէ նա միայն
իւր հերոսական զօրաւոր կրծքով
Պահում է զժուար անկառելի բան։
Եւ մեծ ասելով ի՞նչ են հասկանում։
Ի՞նչն է բարձրացնում, սոսկումով լցնում
Անլուր և նոյնիսկ անհաւատալի
Գործեր պատմողի զգացմունքն հոգին,
Զէ որ արարքի քաջ ու խելացի
Վախճանը միայն։
Միթէ նա միայն արժան է գովքի,
Ով կէս զիշերին բոցի պէս մոլի
Մտնում է անվախ մենակ անընկեր
Թշնամու բանակն ու մահուան մատնում
Քնած թէ արթուն. ապա քաջերից
Ճնշուած, հալածուած թշնամու ձեռով
Փախչում է, սլրձնում հարուստ աւարով։
Կամ միթէ լոկ նա, ով քամահելով
Ապահով յայտնի ուղիներն ամեն՝
Անտառ ու սարի միջով է գնում
Աւազակների աւերիչ ձեռքից

Երկիր Փրկելու:
 Միթէ մեզ ուրիշ ոչինչ չի մնում—
 Միթէ բնատուր իրանց ուժերից
 Պիտի հրաժարուեն փափկասուն կանայք:
 Երաւունքների ճնշումների դէմ
 Նրանք ել նման Ամազոնների
 Միթէ սուր զէնքով պէտք է հանդէս գան
 Ու վայրենու հետ վայրենի լինին:
 Եռում է կրծքում համարձակ մի միտք,
 Որ թէ, չյաջողուի, խոյս տալ չեմ կարող
 Խիստ կրշտամբանքից, նաև դժուարին
 Ծանր չարիքից. բայց այդ միտքն ահա
 Դնում եմ ես ահա ձեր ոտքի առաջ,
 Դուք եթէ արդար մարդ էք, ինչպէս ձեզ
 Այլք են համարում, ապա ցոյց տուէք
 Այդ ձեր օգնութեամբ ու իմ միջոցով
 Փառաւորեցէք սուրբ ճշմարտութիւն:
 Այս, ականջ դիր, ով մեծը արքայ,
 Մի սուտ է նիւթւում գաղտնագող կերպով:
 Չուր ես որոնում դու գերեալներին.
 Հեռու են նոքա, և հապճեպ քայլով
 Փնտրում են իրանց այն ընկերներին,
 Որոնք ծովափում մեզ են սպասում:
 Մեծը նոցանից, նա որին չարիքն
 Բռնել էր և արդ ֆրկուած է արդէն—
 Նա իմ սիրելի եղբայրս է—Օրեստ:
 Իսկ միւսը նրա մանկութեան ընկեր,
 Մօտիկ, սրտակից—Պիլադ անունով:
 Դելֆի քաղաքից այս ափն է զրկում
 Նոցա Ակոլոն, հրաման տալով
 Ծածկաբար կորդել դիցուհու պատկերն
 Ու իւր մօտ տանել քոյրը հարազատ,
 Եւ զրա փոխան խոստանում է նա
 Զար հոգիներից խիստ հալածուածին,
 Մայրական արեամբ մեղապարտ սպանչին

Մեղքից ազատել: Եւ արդ, երկուսին՝
Տանտալի տնից մնացածներիս
Եւ քեզ յանձնեցի: — Ոչնչացրու մեզ
Թէ համարձակուես...

Թուաս. Դաժան, բարբարոս սկիւթը միթէ
Սուրբ ճշմարտութեան և մարդկայնութեան
Զայնը կըլսէ, որ քո յոյն Ատրէսն
Երբէք չէ լսել:

Իգիզենիա. Ինչ երկնի տակ որ մարդ ծնուած լինի,
Կըլսէ այդ ձայնն, եթէ որ միայն
Նրա կրծքի մէջ կեանքի զովարար
Ազրիւրը մաքուր վազում է տղատ,
Անարգել կերպով: Քո խորին կրծքում
Ի՞նչ ես մեզ նիւթում, ով մեծրդ արքայ,
Ամենից առաջ ինձ թող սպանեն:
Այժմ երբ արդէն չկայ փրկութիւն,
Տեսնում եմ, թէ ինչ մեծ ու սոսկալի
Վտանգի եմ մատնել սիրելիներիս:
Վայ ինձ, ես նոցա կապուած պիտ տեսնեմ.
Ես ինչ հայեացքով հրաժեշտ տամ իմ
Սիրեցեալ հղօր, որ իմ ձեռքերից
Մահ է ընդունում, երբէք չեմ կարող
Հոգուս հատորի աչերին նայել:

Թուաս. Քեզ, որ աշխարհից կտրուած ես վազուց,
Մենակ ու փակուած կեանք ես աստ վարում,
Ու ամեն բանի դիւրաւ հաւատում,
Ինչպիսի ճարպիկ մեքենայութեամբ
Բռնել են իրանց ստի ցանցերում:

Իգիզենիա. Ո՞չ, ոչ արքայ, ոչ. ես ինքըս գուցէ
Խաբուած եմ սակայն այդ եկոր մարդիկ
Արդար են: Չիտակ ու ճշմարտախօս:
Իսկ թէ դու նոցա այդպէս վատ գտնես,
Այն ժամ տուր պատուէր նոցա կորստեան
Եւ իբրև պատիժ իմ յիմարութեան
Աքսորիր դու ինձ քար ժայռոտ կղզու

Լուռ ու մենաւոր մի տփատխրական:
 իսկ եթէ այդ մարդն երկար աղերսած ո՞վ
 Եղբայրս է սիրուած, թող մեզ, որ զնանք,
 Ողորմած եղիր նաև իմ Եղբօր, ինչպէս այս Օ
 ինչպէս որ Եիր շարունակ գեղ ինձ:
 Իմ հայրս մեռաւ ամռւսնու դաւից, այս Օ
 իսկ սա Էլ ընկաւ իւր որդու սրից:
 Արդ, Ատրէսի տան միակ վերջին յոյսն Ա առաջ
 Հանգչում է միայն իմ Եղբօր վրայ:
 Թոյլ տուր ինձ, արքայ, մաքուր ձեռքերով
 Ու մաքուր որտով Հայրենիք դառնամ
 Ու Հայրենի տան հին մեղքը քաւեմ:
 Գիտեմ, զուտուած Խօսքը կըպահես—
 Թէ երբեիցէ ինձ հնար լինի մինչա մինչա) այս Օ
 Հայրենիք դառնալ երգուել ես, որ ինձ
 իրաւունք կըտաս: Հասել է ժամն արդ,
 Արքան խնդրողին շուտափոյթ կերպով Վ այս Օ
 Զի պատասխանի ուրիշ մարդկանց պէս, ձմձու
 Որ աղերսողին դլիսից հեռացնի: միաւ միաւ
 Զի էլ խոստանայ, թէ կատարելու միաւ միաւ միաւ
 Նա յոյս չունենայ, Լոկ այն ժամանակ Ա այս Օ
 Զգում է նա իւր ուժն ու մեծութիւն, իւր
 Երբ խնդրողներին գոհացում շնորհէ:
 Թուաս. Ինչողէս որ կրակն ջանք է գործ զնում
 Կոռի մէջ յաղթել իւր ջուր թշնամուն,
 Փրփուրը բերնին եռում, բորբոքում,
 Այնպէս ակտմայ կրծքիս մէջ զայրոյթն
 Կոռում է ուժգին քո Խօսքերիդ հետ:
 Իֆիզենիս. Ո՞չ, թոյլ տուր, արքայ, ողորմածութիւնդ
 Ինչպէս որ խաղաղ զոհի բոցերի այս Օ
 Լոյսը սրբազան՝ կազմի մի պատկանական այս Օ
 Երդի հրճուանքի շնորհակալութեան այս Օ
 Տաղերից հիւսած ու թող մեզ փայլի:
 Թուաս. Քո այդ քնքոյշ ձայնդ ինձ քանի անդամ
 Դիւթել է անուշ: Ճ մաղս պաղը և ճ պաղը

Իֆիզենիա. Մեկնիր, ով արքայ,
Քո ձեռքը իբրև նշան հաշտութեան:
Թոսս. Դու կարճ միջոցում շատ բան ես խնդրում:
Իֆիզենիա. Բարութիւնն երբէք չեն յետաձգում:
Թոսս. Նոյն իսկ շատ անգամ: Զի չարն էլ կըդայ
Բարու յետեից:

Իֆիզենիա. Կասկածն է բարին չարութեան փոխում.
Շատ մի մտածիր, ականջ զիր սրտիդ:

ՀՈՐՇՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Օրես (զինուած) Առաջինները.

Օրեստ. (ըեմին ղարձած): Դէհ, քաջ կռուեցէք, կրկնա-
պատկեցէք

Ուժը ձեռքներնիդ, յետ պահէք նրանց.

Մի վայրկեան էլ բազմութեան առաջ
Զլինի թէ փախչէք: Ինձ ու իմ քրոջ
Նաւին հասնելու ուղին պահեցէք.

(Իֆիզենիային-առանց Արքանին անսնելու)

Մատնուած ենք, արի փախչելու համար
Քեզ ժամանակ կայ շտապիր, արի: (տեսնում է ար-

քային):
Թոսս. (վերցնում է սուրբ). Եմ ներկայութեամբ ոչ ոք

Սնալատիժ կերպով սուր մերկացնել:

Իֆիզենիա. Մահ կատաղութեամբ մի պղծէք այստեղ՝
Դիցուհու մաքուր վայրն այս սրբազան:
Հրամայեցէք այդ խուռն ամբոխին
Թող խաղաղ մնան: Լուէք քրմուհուն,
Լուցէք ամբախտ քրոջ հառաջին:

Օրեստ. Մեզ սպառնացողն ով է, ասա ինձ:

Իֆիզենիա. Դու յանձին դրա-արքային յարգիր.

Միշտ երկրորդ հօր տեղ է եղել դա ինձ.

Ներիր ինձ եղբայր, նրան է յանձնել.

Իմ տղայական սիրու պարզամիտ
Բախու բոլորիս: Զեր մտագրութիւնն
Յայտնեցի նրան ու ինձ փրկեցի
Մատնութեան խայթից:

Օրեստ. Կամենում է նա մեզ խաղաղ կերպով

Թոյլ տալ նաւելու սիրուն Յունաստան:

Իգիզենիա Անկարող եմ ես պատասխան տալ քեզ,

Քանի քո ձեռքում սուսերդ է շողում:

Օրեստ. (սուրը պատեանի մէջ է դնում).

Դէյ, խօսիր, ահա տեսնում ես՝ խօսքիդ

Ականջ եմ դնում: Հանգերորդ ՏԵՍԱՐԱՆ

Նոյնի. Պիլադ. մի ժիշ յետոյ Արքաս

(Երկուսն էլ սուսերամերկ)

Պիլադ. Էլ մի ուշանաք. մեր մարդիկն ահա

Ի մի են ժողվում ուժերը վերջին.

Նոքա խոյս տալով, արագ քայլերով

Դէպ ծովս են դիմում: Սակայն ի՞նչ է այս.

Արքայի յարգուած դլուխն եմ տեսնում:

Արքաս. Կանգնած ես, արքայ, խաղաղ, անվրդով,

Թշնամեաց առաջ՝ քեզ վայել կերպով:

Խակոյն վերջ կըտանք դրանց ժպրհութեան:

Փախչում են, ընկնում մարդիկը նոցա.

Խակ նաւն էլ արդէն առել ենք վաղուց:

Մի խօսք քո բերնից՝ իսկոյն ամեն բան

Բոցի կեր կըլնի:

Թոռաս. Իմ ժողովրդին գնա՛, հրամայիր,

Լուռ խաղաղ մնան: Քանի մենք այստեղ

Խօսքի ենք բռնուած, ոչ ոք նոցանից

Զհամարձակուի մսաս հասցնել

Հակառակորդին: Արքաս զնում՝ է:

(Արքաս զնում՝ է):

Օրեստ. Շատ լաւ, կընդունեմ: Դուք էլ, ո՞վ ընկեր,
Գնա հաւաքիր կողմնակիցներիս: Ազգային դաստիար
Լուռ սպառեցէք: Թեսնենք աստուածներն ուստի
ինչ ելք են տալու մեր այս գործերին:

(Պիլադ զնում է): Կա ամ Նա ամենի ամսո
Համար ամամամ մասիս այդամ յսու Արքի
ամայ յսու մասիս ամամ ամ Նա բողոքմամ ամսմարտիք
Ակեթերութիւն ՏԵՍԱԲԱՆ ոչ վճառ

Իժիգենիա. Թոռաս. Օրեստ,

Իգիզենիա. Նախքան ձեր խօսելն, ազատեցէք ինձ
Մտատանջ հոգսից, երկիւղ եմ կրում
Ես չար պայքարից, եթէ դու, արքայ,
Սուրբ արդարութեան ձայնին չլսես,
Իսկ դու իմ եղբայր, չզսպես քո մէջ
Պատանեկական հուրը բորբոքուած:

Թոռաս. Ես յետ կըպահեմ իմ զայրոյթն ուժվին:
Ինչպէս կըվայելէ դա աւագներին:
Ինչով ցոյց կըտաս, որ եղբայր ես դու,
Ազամեմնոնի որդին հարազատ:

Օրեստ. Ահա այն սուսերն, որով խողխողեց
Նա Տրովադայի քաջերին մէկ մէկ:
Առայ սպանչից և ազերսեցի
Մեծ աստուածներին, որ հաճին տալ ինձ
Արքայ ծնողիս արի քաջութիւն,
Բախտն ու խնդութիւն, և մի զեղեցիկ
Մահ ինձ շնորհին:

Ընտրիր քո զօրքից ամենաքաջին
Ու բեր իմ հանդէպ. ոչ մի օտարի
Չպիտի մերժուի այդ սովորութիւնն,
Քանի աշխարհում դեռ կան հերոսներ:

Թոռաս. Սակայն մեր երկրում բարքերն հինաւուրց
Չեն տայ օտարին դոյն այդ իրաւունք:

Օրեստ. Ուրեմն սկսիր մի նոր սովորոյթ
Քեզնով ու ինձնով: Ամբողջ սերունդներ

Իշխողի արի, քոջասիլոտ գործերն
Օրինակելով օրէնք են դարձնում,
Սրբացնում նրանց: Եւ թոյլ տուր, գոնէ
Ոչ թէ իմ անձիս, այլ ինձ՝ օտարիս,
Օտարի համար թող մենամարտեմ:
Իմ ընկած դէպքում իմ ու նոցա բանն
Արդէն կըպրծնի: Բայց թէ բախտը ինձ
Յաղթութիւն շնորհէ, թող այն ժամանակ
Ոչ մի օտար մարդ ոտ չըդնէ այս
Ափն անհիւրընկալ, առանց սիրալիր
Կարեկից անուշ ընդունելութեան,
Եւ ամեն եկուոր թող միսիթարուի
Այս օտար երկրում:

Թոսս. Դու անարժան չես, ով քաջ պատանի,
Քեզ պարծանք կազմող քաջ նախնիներին:
Շատ կան զօրքիս մէջ ազնիւ ու արի
Քաքասիլոտ մարդիկ: Սակայն եօ կուզեմ,
Թէպէտ արդէն ծեր, զէնքով դուրս գալու
Թշնամու առաջ ու մենամարտել:

Իֆիզենիա. Ո՞չ, պէտք չէ արքայ, այդ արիւնալի
Բաց անել հանդէսն. պահեցէք սրերդ.
Իմ ու վիճակիո մասին խորհեցէք:
Արագ պատերազմն անմահ է դարձնում
Յաճախ քաջ մարդուն: Հէնց որ նա ընկաւ,
Դառնում է դովքի, երգի առարկայ:
Սակայն ոչ մի մարդ, ոչ մի բանաստեղծ
Բնաւ չի տեսնում տանը մնացած,
Որբ, անտէր թողնուած լքուած ամուսնու
Անսպառ, առատ արցունքներն անվերջ.
Եւ լուռ է երգերն այն հազարաւոր
Օրդիշերների լացով ու կոծով
Ժամերի մասին, երբ խաղաղ հոգին
Իզուր է հալւում: տենչում ու կոչում
Արագ բաժանուած անուշ ընկերին:
Եւ ինձ էլ կարծես թւում էր յաճախ,

Թէ աւազակի պատրանք չէ արդեօք,
 ինձ իմ ապահով հովանուց կորզել
 Ու ստրկութեան մատնել մշտապէս:
 Մտադրութեամբ քննել եմ ես այդ,
 Ամեն հանգամանք լաւ ծանօթացել,
 Նշաններ խնդրել և հիմա արդէն
 Հանդիստ է հողիս, նայիր աջ ձեռքին,
 Երեք նշաններն երեք աստղի պէս
 Որ ծննդեան հետ երեան եկան,
 Որոնք քրմուհու մեկնութեան նայած
 Նշան են, թէ նա ծանրագին գործեր
 Պէտք է կատարէր: Ապա ինձ համար
 Կրկնակի զօրեղ փաստ է այդ սպին,
 Որ յօնքի միջով իջնում է ուղիղ:
 Նա դեռ երեխայ, ձգեց էլեկտրան
 Արագ, անզգոյշ, ինչպէս որ էր միշտ,
 Իւր բազուկներից, և տղան ընկաւ
 Եռոտանու վրայ. նա է, նա անշուշտ.
 Եւ դեռ իբրև փաստ միթէ պիտ ասեմ
 Հօր հետ ունեցած համեմատութիւնն
 Ու որտիս ներքին ցնծութիւնն անխար:
 Թոաս. Քո խօսքերն ինձնից թէկուզ փարատեն
 Ամեն կասկածանք ու սանձահարեն
 Իմ յուզուած կրծքիս ցասումն ու զայրոյթ,
 Բայց էի մեր մէջ զէնքը պիտ լինի
 Խնդրին վերջ տուող: Ես խաղաղութիւն
 Զեմ տեսնում այստեղ: Դու ինքդ առացիր,
 Եկել են նոքա ինձնից կորզելու
 Դիցուհու պատկերն: Կարծում էք, թէ ես
 Խաղաղ անվրդով թոյլ կըտամ ձեզ այդ:
 Յոյնը շատ անգամ տենչասէր իւր աչքն
 Ուղղում է գէպի բարբարոսական
 Գանձերն հեռաւոր, ոսկեղէն մորթեր,
 Գեղեցիկ ձիեր, սիրուն աղջիկներ,
 Բայց բռնի ուժն ու խորամանկութիւն

Նրան ցանկացած իւր աւարներով
 Միշտ էլ բախտաւոր տուն չեն յետ գարձնում։
 Օրեստ. Թող մեզ չբաժնէ, ով մեծրդ արքայ,
 Դիցուհու պատկերն։ Հասկանում ենք արդ
 Մեր մոլորութիւնն, որով իբրև ցանց
 Պարփակել էր մեզ այստեղ ուղարկող
 Մի ոլիմպիական։ Խնդրեցի նրան
 Զար ոգիների ճանկից ինձ փրկել,
 Եւ նա ինձ ասաց. «Երբ դու կըքերես
 Տաւրիսի ափում սուրբ տաճարի մէջ
 Կամքին հակառակ կեանք վարող քրոջ
 Դէպի Յունաստան, ընդ միշտ կըքրկուես
 Այդ հին անէծքից»։
 Մենք կարծում էինք խօսքն Ապօլլօնի
 Հարազատ քրոջ մասին էր անշուշտ,
 Սակայն նա լոկ քեզ ինկատի ունէր։
 Դժուար կապանքներն արձակուած են արդ.
 Դու նորից կերթաս քո սիրելեաց մօտ։
 Ինձ շօշափեցիր, ես առողջացայ.
 Բազուկներիդ մէջ ինձ վերջին անգամ
 Սուր ճիրաններով բռնեց ժանտ շարիքն,
 Սոսկալի կերպով տակն ու վրայ արաւ
 Ուղեղս ու հօգիս. ապա օձի պէս
 Խոյս տուաւ, փախաւ դժոխքն ահաւոր։
 Ես քո միջոցով նորից եմ վայելում
 Օրուայ փառաւոր լոյս կենսատու։
 Դիցուհու խորհուրդն հոյակապ սիրուն
 է արդ ինձ թւում։ Զերթ մի սուրբ պատկեր,
 Որ աստուածների գաղտնի խորհուրդով
 Կապուած է անշարժ հայրենի քաղքի
 Ճակատագրի հետ, վերցրեց, տարաւ քեզ՝
 Մեր տան պաշտպանին. ու մի սրբազան
 Խաղաղութեան մէջ հայրենի քո տան
 Սիրելիներիդ օգնելու համար ոչխերց զնան
 Պահեց պահպանեց։ Եւ երբ մեզ արդէն

Ամեն յոյս կորած, կտրուած էր թռումաք մայմ
Դումեզ ամեն բան տալիս եռ կրկին չե աշխի
Եւ թող քո հոգին, ով մեծըդ արքայ, ու բան առաջ
Հաշտութեան դառնայ: Արգելք մի լինիր առջի
Որ նա կատարէ մեր հայրենի տան ապայն չե՞ն
Չօնը սրբազն: Դարձրու մեզ կրկին յախայաք
Քաւուած մեր օճախն, ու թող որ զլիիս չե՞ն
Փայլի նոր ի նոր մեր արքայական կամաց դաշ
Թաղը սղաւոր: Եղիր վարձատրող ու ամ ամ
Այն օրհնութեան տեղ, որ քոյրս բերաւ այս
Բո ամբողջ երկրին, թոյլ տուր, որ վայելեմ ամ
Անձիս ռեփական իմ իրաւունքներաւ մասն ձբաժ
Խնչպէս բռնի ուժն, խորամանկութիւնն, ու Այն
Այր մարդկանց այդ մեծ պարծանքն առաջին
Այս ազնիւ հոգու ուղղասիրութեամբ ապրայան
Պարտութիւն կրեց, այդպէս էլ նրա ամ մկանի
Շիտակ, պարզամիտ խոր վստահութիւննայան
Դէպ ազնիւ մի մարդ թող որ սրանով առ

Հատուցուած լինի:

Իֆիզենիա. Յիշիր քո խոստումդ, ու Հաւատարիմ
Այս շիտակ բերնից դուրս եկած խօսքերն առան
Ցուզեն թող հոգիդ, մէջըդ գութ շարժեն: այսուն
Նայիր մեզ, արքայ, այսպիսի ազնիւ ու սրբան
Արարքի համար դու յարմար առիթ առան
Միշտ չես ունենայ: Չես կարող մերժել. . . ու
Օ՛, շնորհիր շուտ քո հաւանութիւն . . . սա ազն
Դոսս. Դէ՛հ լաւ, գնացէք:
Իֆիզենիա. Օ՛, ոչ, իմ արքայ,
Առանց օրհնութեան, հակառակ կամքիդ առան զի
Երբէք քեզանից ես չեմ բաժանուի: ճաւաբար
Մի արտաքսիր մեզ: Թող այսուհետեւ
Հիւրասիրութեան մի սուրբ իրաւունք մաս դժն
Խշէ մեր միջին, այդ եղանակով մասն ապրան
Մենք ընդմիշտ քեզնից զատուած չենք լինի: Այս
Դու ինձ, ով արքայ, թանգ ես, սիրելի, ըստաք

ինչպէս անուշիկ հայրս հարազատ:

Եւ հոգուո խորքում եռ միշտ կըպահեմ

Պատկերդ անանց: Թէ երբենիցէ

Քո ժողովրդից ամենայետին

Մարդը մինչ անզամ հասցնելու լինի

Իմ ականջներիս ծանօթ ձայների

Հնչիւններն անուշ՝ որ յաճախ ձեզ մօտ մասին չեն չել իմ արդէն, և թէ մեր երկրում ու առ անուն կազմակերպութիւնների վրայ տեսնելու լինիմ

Տարազն այստրետի — դիտցիր, ով արքայ,

Աստղծու նման կընդունեմ նրան, պահանջ-ըստութ

Ես ինքս անձամբ տեղ կըպատրաստեմ, առամայ մերս

Ակրտանեմ նրան կրտի առաջ, յուսուցայ մայակա

Աթոռի վրայ և հարցեր կրտամ

Միայն քո բախտի, քո անձիդ մասին:

Ո՞չ, թող աստուածներն քո մեծ ողորմած

Գործերիդ համար արժանավայել ոճ դժբակ մայ

Քեզ վարձ շնորհեն: Դէհ մնաս բարով և առաջարկ

Ո՞չ, նայիր, արքայ, ազքըդ մեզ դարձրու,

Եւ հրաժեշտի մի անուշ խօսքով

Օրհնիր մեր ուղին. և այն ժամանակ

Զեփիւռը մեղմիկ կամաց կըճօճէ

Նաւի առաջաստի ու բաժանուողի

Աչերից քնքոյշ մեղմիկ կըհոսէ

Արցունքն ամքիչ: — Ո՞չ, մնաս բարով . . .

Դէհ ձեռքըդ մեկնիր իբրև մի նշան

Մեր հին անմօռաց բարեկամութեան:

Թոսս. Գնացէք բարով: Ճայր քոյ, և ամսառ առքուն չետք չ

Ն ավասան մաքայտ մասն : Դէուրգ Ալթունեան մըսաւախճամբ

— ոյամ ըրայ, այլմասու մայթ առաջ բարուալի ամիսու չ նառ ք

ընյածք և նպարան, աշու չ նառ ք օտար զամանք ու այլար

առ մայտաւ մմազայտաւ պայտափաթ զմուատ, ոմ և մայտար

այս ամ նառմասուաթը ընյածք յաճուաբայմի չ նառաւաց

քանա զմանք լիյունցը —————— առանուանեան, չ նառ զաման

չմդք ամ — Նախուան մայթական ՇՇ-ՇՇ, և սիյունցին վըն, Նառ

մ ծառփոփին զմազ պահանգաւանու միաւզին ույս դոյ չ